

# Փ Ո Ւ Ն Պ

## ԱԶԳԱՅԻՆ

Ահա առիկ, Ասլանեան վսեմափայլ Ստեփան վաչայի երկրորդ նամակը: Դարձեալ կը խնդրեմք, որ ազգային դաստիարակութեան կարևոր ու կենսական գործին գլուխը գտնուողներն ուշադրութեամբ և քանի մ'անգամ կարդան:

Սիրելի խմբագիր.

Անցեալ շաբթու առաջին նամակաւ խոստացայ, երկրորդով՝ Քաղաքային վարժարանի ըրած այցելութիւնս և սոյն տեսակ նախալըրթարաններու վիճակն ու ուսման ընթացքը նըկարագրել: Ահա առիկ դամ խոստումս կատարել, որչափ ժամանակս ու կարողութիւնս կը ներեն:

Իմ այց ելած Նախալըրթական կամ Քաղաքային վարժարանս դարձեալ Եօզիմիդատ արուարձանի մէջն է. մեծ և ընդարձակ դպրոց մը որ յառաջ եկեղեցական կամ կրօնական Միաբանութեան մը ձեռքն է եղեր, բայց 73ի նոր տնօրէնութեամբ անոր ձեռքէն առնուելու և աշխարհականացուցուելով, ինչպէս եւրոպացիք կ'ըսեն, Քաղաքական վարչութեան յանձնուելու է. աստի Քաղաքային անուը կը կրէ, ինչպէս ուրիշ ամեն այս աստիճանի նախալըրթարանները (պէ՛րկըրընուէ) որ ամեն մէկ արուարձանի մէջ մէկ կամ մէկ քանի հատ և իւրաքանչիւր սեռի համար առանձին կը գտնուին:

Սոյն վարժարանը ի հնումն վանք եղած ըլլալով, քարուկր՝ կամարակապ, ընդարձակ բայց անկանոն բաժանմամբ շէնք ունի. բայց ամեն կողմ մաքրութիւն և անպաճոյճ պարզութիւն կը տիրէ. ութը ուսումնարան հոնի, մատենադարան մը, գծագրութեան և նկարչութեան մասնաւոր ընդարձակ դասարան մը, բնագիտութեան և տարրաւճուցութեան աշխատարան մը (եթէ յայտարարուաւ, բառն կրնայ այսպէս թարգմանուիլ), բնական պատմութեան յատուկ թանգարան մը, դասատուաց ժողովարան, աշակերտաց մարմնամարդի ընդարձակ սրահ, զբօսարան, և այլ ամեն ի՛նչ որ կարգաւորեալ վարժարան մը պէտք է ունենալ, ունի ամենայն պիտոյիւք յարգարեալ:

Աշակերտներն 5-600ի չափ կային, ամենն ալ արական սեռէ, բայց ամեն ցեղէ և կրօնքէ անխախտ: Այս տեղ պէտք է կանխաւ յայտնեմ որ այս տեսակ վարժարանները քաթօլիք, բօթօլթեան և հրէական կրօնից համար դատ դատ կ'ըլլան այն արուարձաններու մէջ, ուր սոյն կրօնից ամեն մէկէն բազմաթիւ բնակիչք կը գտնուին. իսկ անդ ուր մէկ կրօնքէ խիստ շատ՝ իսկ միւսներէն սակաւաթիւ բնակիչք կան, մէկ կամ երկու՝ ըստ թուոյ աշակերտաց վարժարան կը գտնուին, ուր ամեն կրօնքէ անխախտ տղայք կը դաստիարակուին, և մեծագոյն մասի կրօնքը նոյն վարժարանի մէջ կ'ուսուցուի, իսկ օտարակրօնից համար դարձեալ մի և նոյն թաղին մէջ առանձին դասարան մը հաստատուելով. ասոնք միմիայն կրօնագիտութեան դասի համար այն դասարան կ'երթան որոշեալ ժամանակներ, և իրենց կրօնական ուսուցիչները իւրաքանչիւրին՝ կրօնագիտութեան քննութեան ենտե՛ վկայագիր կ'աւանդեն, և նոյն վկայագրերը կուզան կը ժողովուին թաղին մեծ վարժարանի տնօրէնութեան ձեռքը. զի այս կարգի վարժարաններու մէջ տղայք իւրաքանչիւր իրենց կրօնքը սովորելն կանոնական պայմանն է, և ամեն տարեգրուի անձնիւր աշակերտ

տի ձեռքը իր կրօնքի ուսման մէջ ունեցած տեղեկութիւնն յայտնող վկայագիր պէտք է գըտնուի:

Այս վարժարաններու մէջ տղայք 6 տարուէն սկսեալ մինչեւ 14 և առ առաւելն 16 տարեկան կրնան գտնուիլ, և ամենն ալ ճիշտ կը դաստիարակուին, անկարողներն ալ դպրոցական գործեաց, թղթի, գրչի, ևն պիտո՛յքն ալ ճիշտ ընդունելով:

Ծախքը տէրութիւնը կամ աւելի ճիշտ խօսելով հասարակութիւնը կը հոգայ, քաղաքացւոց տան վարձու տուրքին 100ին 23/4 դպրոցական տուրք անուշով աւելագրեալ ստակէն:

Տղայոց այս աստիճանի դաստիարակութիւնը պարտաւորիչ է, կրնայ ըսուիլ բռնի՛ է. ծընողք կը պատժուին եթէ զաւակնին անկէ զըրկել ուղեն. և մինչեւ անգամ եթէ տղու մը վարուց անկարգութեան պատճառաւ ուրիշներու շար օրինակ չ'ըլլալու համար դպրոցէն արտաքսուելն հարկ ըլլայ, անոր ծնողքը պարտաւոր են տղուն նախալըրթական ուսմունքը տան մէջ մասնաւոր դասատուաց ձեռքով շարունակել. և եթէ չ'ընեն, հասարակութիւնը դասատու կը զրկէ տունը, և ծախքը ծնողքէն կը պահանջէ. և վճարել չուզողները իբր պարտատէր կը բանտարկէ:

Ի՛նչ կ'ուսանին տղայք այս վարժարաններու մէջ—նախալըրթական ուսմունք և գիտութիւնք, բայց կանոնաւոր, կատարեալ և վստաւոր:

Աշակերտք ութ կարգ կամ դասի բաժնուած են, և իւրաքանչիւր դաս— և բարձր դասերու մէջ իւրաքանչիւր ուսումն առանձին իր դասատուն ունի, և ամենուն վրայ կը հսկէ տնօրէն մը որ ամեն ժամանակ դպրոցի մէջ կը գտնուի:

Ուսմանց ընթացքը ամեն բանի մէջ դիւրիւնէն ի դժուարին, ծանօթէն յանծանօթ և տեսական և գործնական մէկտեղ, տղոց հոգին, մարմինն ու միտքը միանգամայն կրթելու և կատարելագործելու կերպով յարգարուած է:

Շարունակելի Անձնուէրք Ս. ԱՍԼԱՆԵԱՆ

Կարնոյ գեր. Առաջնորդէն սեպտ. 29 թուով ընդարձակ տեղեկագիր մը այս օրերս Պատրիարքարան հասած է, յորում յակնէ յանուանէ նշանակուած են՝ Պայագիտի վիճակին մէջ անցեալները քիւրտերէն սպանեալ, և վիրաւորուելով կամ վախնալով մեռնող մեր ազգայինները: Ընդամենը՝ 136 հոգի սպանուել են, 103 հոգի վիրաւորուելով կամ վախնալով մեռել են, և 134 հոգի ալ այլևայլ կողմեր ցրուել են: Իսկ նիւթական կորուստն խիստ շատ է, ըստ տեղեկագրոյն:

Նորին գերապատուութիւնը խոստացեր է՝ Ալաշկերտի և Բասենու վիճակաց ազգայնոց կորստեան ու վնասուց վրայ ալ մանրամասն տեղեկագրել:

Վերագրեալ թիւերէն դիւրին է մակարեւել, թէ յառաջագոյն լուսածները՝ չափազանցութեան արդիւնք են:

Գանի մը շարաթյառաջ փութացինք գոհութեամբ ծանուցանել թէ Հայկազ-

եան կաճառ անունով բանասիրաց ժողով մը պիտի կազմուի, հրաւիրանք ազգային մատենադարանի ընկերութեան՝ որ բաւական ժամանակէ հետե հաստատուած է Ղալաթիոյ կեդրոնական վարժարանին մէջ, և Ուսումնական խորհրդէն վաւերացեալ:

Արդ՝ կիմանամք, որ յիշեալ կաճառն առաջին նիստը պիտի ընէ առաջիկայ կիւրակէ օր Ղալաթիա մատենադարանի սրահին մէջ:

Այս կաճառին հետադուտութեանց առարկայ պիտի ըլլայ ամենայն ինչ՝ որ հայութեան անցելոյն և ներկային կվերաբերի. այսինքն՝ Հայկազեան լեզու, Գաւառական բարբառք, Բաղդատական լեզուագիտութիւն, Մատենագրական պատմութիւն, Ազգային պատմութիւն, Հնագիտութիւն, Հին և նոր սովորութիւնք, Դրամագիտութիւն, Դիցարանութիւն, Աշխարհագրութիւն, Բնական պատմութիւն, Արուեստք, Գեղագրութիւնք և այլն:

Ամենայն եռանդեամբ կարեմադրութեմք այս ձեռնարկութեան յաջողութեան համար, որ ազգային յառաջագիտութեան շինուածոյն անկեան վէմն պիտի ըլլայ: Կմօղթեմք, որ ուրիշ շատ մը այսպիսի ձեռնարկութեանց կարգը չանցնի, ասուպի պէս երևելն ու անհետիլը մէկ ըլլալով:

Մարզուանէն հոկտ. 1 թուով գրուած նամակ մը ուրախութեամբ կ'անուցանէ մեզ՝ տեղոյն Ս. Սահակեան վարժարանին դասատու պատուելի Կարապետ Տ. Յովակիմեանի Տ. Չենոբ անուամբ քահանայ ձեռնադրուիլը Ս. Վանս Մարզուանու, շնորհիւ գեր. Տ. Եղեւսեան Ս. Հօր:

Նորենձայ Հայրն արժանի էր այս կոչման ու կարգին՝ իւր սրտի ու մտաց յատկութեամբք, որոց բաւական խելամուտեղած եմք՝ մեր անընդհատ յարաբերութեամբն: Կշնորհաւորեմք, անտարակոյս ըլլալով թէ առաւել օգտակար պիտի հանդիսանայ մեր ազգայնոց՝ իւր այս նորահաստատ վիճակին մէջ:

Ծանուցինք մեր վերջընթերթերթերթովք, Ղալաթիոյ եկեղեցւոյ կալուածոց հոգաբարձութեան փոխուած՝ և այլոց ընտրուած ըլլալը: Կյուսայինք, թէ նորընտիրք սկսած են վարել իրենց պաշտօնք. բայց միայն մէկը գացեր և ընկերները չտեսնելով՝ խախտի դարձեր է: Այսու ամենայնիւ, նախորդ Հոգաբարձութեան անդամներէն փափագեան էֆէնտի, Պատրիարքարանի ծանուցագիրն ընդունելուն պէս հրաժարեր, և պաշտօնական ամենայն ինչ յանձներ է, իւր ընկերներէն Մելիքեան Թաղուր էֆէնտի՝ որ արդէն թաղական խորհրդոյ անդամ

է և հոգաբարձութեան սնտուկին գանձապետութիւնը կ'վարէ : Փափաղեան էֆէնտի յատուկ գրով ալ ծանուցեր է ազգային վարչութեան՝ այսուհետեւ որ և է պատասխանատուութենէ ազատ ըլլալը :

Հարկ չկայ ըսել, թէ Ղալաթիոյ եկեղեցւոյն վնասակար կըլլայ, եթէ նորընտիր Հոգաբարձութիւնը իւր պաշտօնին գլուխը չանցնի ժամ յառաջ :

### Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Հարկաւ դիտած են մեր ընթերցողք, թէ պատերազմին սկիզբէն ի վեր ամեն անգամ երբ պատերազմական լուրերը կ'ընկնան, հաշտութեան զրոյցներն ալ կ'յաճախեն : Այսպէս կըլլայ ահա այս օրերս ալ Նախ վիէննայէն հեռագիր մը ծանոց, թէ Անտրասի կոմսը յայտարարեր է որ Ասիոյ վերջին անցքին վրայ հաշտութեան համար միջամտութեան ժամն հասած է, բայց ինքը առաջին առաջարկողը չպիտի ըլլայ : Քիչ մ'ետքը լոնտոնէն քաշուած հեռագիր մը տեսնուեցաւ, ծանուցանող թէ՛ Անգլիոյ կառավարութիւնը Ռուսիոյ դիտաւորութիւնը իմանալ ուզեր է հաշտութեան մասին : Յետ այնորիկ երեւան ելան ուրիշ հեռագրեր և լրագրական ծանօթութիւններ, յորոց կիմացուի թէ գլխաւորաբար լոնտոնի մէջ խորհրդակցութիւնը կըլլան : Լորտ Տէրպլի՝ որ բացակայ էր մայրաքաղաքէն, փութացեր դարձեր, և օսմանեան՝ աւստրիական ու գաղղիական դեսպանաց հետ ընդերկար տեսակցեր է : Օր մ'ետքը լորտ Պիքոնսֆիլտ ալ լոնտոնի մէջ տեսնուեր, լորտ Տէրպլիի հետ խորհրդակցեր, և ասոր վրայ յատկապէս գրեւոր կ'ընեն մայրաքաղաքս : Պօլսոյ մէջ ալ դեսպանք շարժութիւնը ի ժողով գումարեցան ընդ նախագահութեամբ աւստրիական դեսպանին, և մինչեւ կէս գիշեր խորհրդակցեցան : Բ. Դրան և դեսպանաց մէջ ալ յաճախ բանակցութիւններ կըլլան . ինչնաեւ բարձրաստիճան նախարարք ալ գիշեր ցերեկ կ'խորհրդակցին առանձինն : Եւ վերջապէս դարձեալ հաշտութեան յոյս մը կ'սկսի : Մաղթելով, որ դարձեալ ապարդիւն չընէ, կանցնիմք պատերազմական լուրերն ամփոփել :

Եթէ ուստի աղբիւրներէ ելած տեղեկութիւններուն հաւատամք, քիչ օրէն բոլոր Ասիան պիտի գրաւեն, և Ռուսիի մէջ ամեն կարեւոր գիրքեր իրենց պիտի ըլլայ : Անատոլիի մէջ Միքայել արշիդուքսին բանակակերտներ վէճիկն-քէօյ փոխադրուեր է, Պարսք բոլորովին պաշարուեր, մինչեւ իսկ անձնատուութիւն առաջարկուեր է օսմանեան հրամանատարաց, և կարնոյ վրայ կարչաւեն եղեր : Մինչդեռ միւս կողմանէ Մուսթար և Իսմայիլ Հագգը փաշաներուն և կարնոյ փոխ-կուսակալին պաշտօնական հեռագիրք կ'առնուին, յորոց կհաստատուի թէ Մուսթար և Իսմայիլ փաշաները միացած են, արդէն մեծ զօրութիւն համախմբուած է և կհամախմբուի, և ուստաց դիմադրելու կարող վիճակի մէջ կը գտնուին, որովք ուստական վերոյիշեալ լուրերուն չափազանցութիւնը ակնյայտնի կերեւի : Դարձեալ Ռուսական աղ-

բիւրներէ տակաւին պատմութիւններ ու նկարագրութիւններ դուրս կ'յորդեն՝ Ասիոյ վերջին պատերազմին վրայ . տակաւին կ'սկսեն թէ մինչեւ 22 վաշտ դերի առեր են, և ոմանք մինչեւ 32 վաշտի կհանեն, 36 թնդանօթ առեր են, հազարաւոր վրան, 2000 ձի և բազում ռազմամթերք ու պաշար դրաւեր են, փաշաներու անուններ ալ կուտան, որոնք են եղեր, Քեպուրի փաշա, Շէվքէթ փաշա, Չէրքէս Մուսա փաշա, Շամիլի որդին Ղազի Մէհմէտ փաշա, և Էօմէր փաշա, որոց վերջինը Ռուսիոյ Գուրլանդ նահանգին բնիկներէն է եղեր : Այսպէս կ'չարունակեն չափազանցութիւնները, մինչդեռ զինուորական պաշտօնատան կողմանէ հրատարակեալ հեռագիրք բուն եղելութիւնը արդէն ծանուցած են, և մեք մեր ընթերցողաց հաղորդած եմք :

Իսկ Ռուսիի կողմին գալով, բաւական կհամարիմք՝ վաղըթ լրագրոյն այս առաւօտեան թերթէն հետեւեալ քաղուածն ընել :

« Օրխանիյէ գտնուող Շէվքէթ փաշա՝ նոյն կողմերը և Բէյլիսայի ճանապարհին վրայ պէտք եղած կարեւոր տեղերը պատնէշներ շինելով՝ ճամբան ապահովցուցած է : Հագգը փաշայի հրամանին ներքև գտնուող զօրքը, ըստ ոմանց՝ երեք վաշտէ, և ըստ այլոց՝ երեք վաշտէ զատ մաս մ'ալ օժանդակ զօրքէ բաղկացող և թիլիշի դիրքը պահպանող զօրաբաժնին վրայ, կիւրակէ օրը երբ ուսք յարձակեր են, Հագգը փաշա անմիջապէս զէնքնկէց ըլլալով անձնատուր եղեր է : Շէվքէթ փաշա իմանալուն պէս իսկոյն իւր զօրքն հասեր, խիստ ուժգին պատերազմի մը բռնուեր, թշնամոյն մեծ հարուած տուեր, ըստ ամենայնի վրէժ առեր, և իւր կարավանովն հանդերձ Գարաճա լուր բռնուեր է, որ այս կարեւոր ճանապարհին հողին կհամարուի : Ռուսք Եւրոպա քաջած իրենց հեռագրոց մէջ խոստովանած են, « Շէվքէթ փաշայի հրամանատարութեամբ « ի վերջոյ հասնող օսմանեան զօրաց հետ « մղուած պատերազմին մէջ մեծ կուրուստ ունեցանք » ըսելով :

« Չեմք գիտեր, թէ ինչ բանաւոր պատճառաւ Հագգը փաշա զէնքնկէց եղած է, թշնամին տեսնելուն պէս. ուստի չեմք կրնար ո՛րևէ դիտողութիւն ընել և կսպասեմք պաշտօնական տեղեկութեանց . բայց հարկաւ մեծ պակասութեան մէջ գտնուած է Հագգը փաշա . որովհետև հոն գտնուող և քանի մ'օրէ հետէ մայրաքաղաքս դարձող ռազմագէտ անգղիացի թղթակից մը ըսեր է, թէ անտի 10000 թշնամի չեմանցուներ, հետս միայն հազար զօրք ունենալով :

« Երէկ զրոյց մ'ալ ելաւ, թէ ուսք Հէզարկրատի վրայ խաղալով՝ պատերազմ մը սկսեր է, և դեռ կ'չարունակէ եղեր . սակայն՝ մեր տեղեկութեանց նայելով, պաշտօնական վայրերը դեռ այսպիսի լուր ծանուցանող հեռագիր հասած չէ » :

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այս առաւօտ գրած է Պասիլէթ, թէ կայսերական կառավարութիւնն որո-

շեր է՝ 300 հզր զօրք ալ ժողովել ի հարկին պէտք եղած տեղերը զրկելու համար : Ասոնց 80 հազարը՝ 92 տարւոյ վիճակագրութենէն պիտի ըլլան, և մնացորդք՝ կըսէ, Բէտիֆ և Միւսթահֆըզ, ամենքն ալ վարժ և փորձ : Սպառազինութեան համար, այժմէն պատրաստութեանց ձեռնարկուած են :

— Կայսերական հրամանաւ, Բ. Դրան մէջ յանձնաժողով մը կազմուեր է, պէտք եղած կանոնական ծրագրերը խմբագրելու և երեսփոխանական ժողովոյ մատուցանելու համար, որոյ նոր ընտրութեանց ձեռնարկեալ է արդէն :

— Բատուի բացերը երեք հեղինական նաւ բռնուեր են, վրանին կասկած ըլլալով :

— Երկու օր յառաջ Պէյօղլու ուսական լրտես մը բռնուեր է, կըսէ իսթամպուլ, որ շտաբիոյ հպատակ է եղեր : Բռնուած ատենը, ոստիկանաց մէկը վիրաւորեր է :

— Ֆար տիւ Պոսֆոր ի լրոյ կհրատարակէ թէ, Ռուսմանիոյ մէջ յեղափոխութիւն մը պիտի ելնէ, եթէ կարողոս իշխանը, ըստ պահանջման ընդդիմադիր մասին, կա՛մ Պուրէշ չդառնայ, և կա՛մ իւր տեղ փոխանորդ մարմին մը չկազմէ :

— Երկուշաբթի երեկոյ աւստրիական դեսպանը խնճոյք մը տուաւ ի պատիւ գերմանական դեսպանին, ի ներկայութեան դեսպանաց ոմանց :

Շարաթ օր ալ խտալական դեսպանը աւստրիականին կողունը մը տուաւ, ուր ներկայ վիճակին վրայ ալ բաւական խորհրդակցեր են :

— Էտիւրնէի կուսակալի նախորդ օգնական Մէրվէրէ Էֆէնտի Սքովազի կուսակալի օգնական ընտրուեր է :

— Օգոստ. Սուլթանը քանի մ'օր յառաջ իւր ներկայութեանը ընդունելով՝ պատերազմին մէջ վիրաւորեալ և յետոյ առողջացեալ զօրականը, քաջալերեր, և իւր ձեռքը շքադրամներ ու պարգև բաշխեր է :

— Յունաստանի կառավարութիւնը որոշեր է՝ տարին 12000 տրախմի նպաստ տալ այսուհետեւ, Ֆէնէրի յունական վարժարանին :

— Պէշիքայի անգղիական նաւատորմը Ֆիլամէթր անուն շոգենաւն մայրաքաղաքս եկեր է : Դարձեալ լուր կայ, թէ այս նաւատորմին կէսը Մալթա պիտի երթայ :

— Կրետէի յոյն երեսփոխաններէն Խրիստոֆօս՝ որ մայրաքաղաքս բերուած էր, ըստ ոմանց արձակուեր է, և ըստ այլոց՝ Տիգրանակերտ պիտի աքսորուի :

— Երկուշաբթի գիշեր, Պէյօղլու զբօսարանի մը մէջ, աւստրիացի մը իւր ընկերաց բաժակ առաջարկեր է Ռուսիոյ ըրած յաղթութեան համար . հունգարացի մը մերժեր է զայն՝ օսմանցուց վրայ դովեստիւք խօսելով . սակայն աւստրիացին որ գլուխը տաքցած է եղեր, չէ համոզուեր, և առաջարկեալ բաժակը պարպուեր է . ասոր վրայ հունգարացին, որ նոյնպէս տաքցած է եղեր, դաշտնը հաներ և աւստրիացիին կուրծքը մխեր է :

— Օսմանը լրագրէն կիմանամք, թէ Բէշթի ազգային թատրոնին մէջ շքեղ ներկայացում մը տրուեր է, ի նպաստ օս-

մանեան վիրաւորաց : Գլխաւոր դերասանուհին արարուածներուն մէջ տեղերը տաճկերէն լեզուաւ երգեր է , Էմալըմբէ-Քրեարքմըզ , Էյ-Ղազիլէր , և փառիշահմ-չօղ-եաշա երգերը :

Հաշիւ եղած է , որ այժմ Եւրոպիոյ մէջ 21 հազար թնդանօթ , 1 միլիոն 100 հազար ձի , 9 միլիոն ցամաքային զօրք , 310 հազար ծովային զօրք , 2838 պատերազմական նաւ կան որոյ 239 ը զրահաւոր են և ամենքը 16 հազար թնդանօթ կպարունակեն : Ասոնցմէ զատ 10 1/2 նաւ կառուցուելու վրայ է , 66 զբրահաւոր ըլլալով : Տարին 13 միլիար ֆրանք ծախք կըլլայ , հիւանդանոցներն ու ամբուլթիւններն ալ հաշուելով :

Սա՛ վիճակագրութիւնը կարգացողը հարկաւ պիտի դիտէ , թէ արեան ու աւերի համար վատնուած այս ահաւելի դոււարը , եթէ՛ շինութեան ու զբրգացման համար գործածուէր , ո՛րչափ մեծամեծ բարիք կտեսնուէին :

— Ասիոյ մէջ ռուսաց վերջին յաջողութեան լուրը Բէլլուայի բանակն հասնելուն պէս , դոհարանական աղօթքներ կարգացուեր , և թնդանօթներ արձակուեր ու հանդէս կատարուեր է : Աղեկսանդր կայսեր կողմանէ այս յաջողութիւնը Գերմանիոյ կայսեր հեռագրուած ըլլալով՝ Գերմանիոյ կայսրը 11 1/2 ժամ յետոյ շնորհաւորութեան փոխադարձ հեռագիր հասուցեր է առ Աղեկսանդր : Այս պատերազմին մէջ ռուսաց թիւն 65 հազարի չափ է եղեր , մինչդեռ օսմանցւոցն՝ հազիւ 30000 է եղեր :

— Յունաստանի թագաւորին մօրեղբայրն Աթէնք պիտի գայ , նախարարաց նախագահելու պաշտօնով : Կըսուի , թէ եւրոպական գործարան մը պայմանագրեր է՝ Յունաստանի ծովային պիտոյքը մատակարարելու համար :

— Անդղիոյ հաշուագէտք հաշուեր են , թէ Ռուսիա մինչև ցարդ 5 1/2 միլիոն անգղիական լիրա ծախք ըրեր է պատերազմի համար :

— « Մեծին Պիղմարգի փոքրիկ տետրակը » անունով նոր հրատարակութիւն մը տեսնուեր է այս օրերս Գերմանիոյ մէջ , որոյ հեղինակը Արնիմ կոմսը կկարծուի , և գրուածը՝ բոլորովին Պիղմարգի դէմ է :

Փայծեղ (որակի համալուր)

Վերջընթեր թերթով անասնոց համաճարակ և տարափոխիկ հիւանդութեանց վրայ ընդհանուր կերպով համառօտաբար խօսեցանք : Այս անգամ միայն ոչ խորաց համաճարակ հիւանդութեանց ահարկուներէն և վտանգաւորներէն մին՝ որ փայծեղ (տալք հասթալըզ) կըսուի , պիտի բացատրեմք՝ պէտք եղած դարմաններն ալ նշանակելով :

Եթէ սոյն հիւանդութենէն բռնուած ոչխարաց թիւը՝ աշխարհիս ստեղծմանէն մինչև հիմայ՝ համրելու ըլլանք , սոսկալի դոււար մը կտեսնենք . հիւանդութիւն մը՝ որ բիւրաւոր ոչխարներ զոհ կտանի , որով թէ՛ երկրագործութեան և թէ՛ վաճառականութեան ալ մեծ վնաս կըբերէ : Սոյն հիւանդութիւնը , ինչպէս վերը ըսինք , ոչխարաց

հիւանդութեանց ահարկուներէն մէկն ըլլալով՝ թէ՛ միւս կենդանեաց և թէ՛ նաև մարդոց ալ կտարափոխի : Պատճառը մինչև հիմա յայտնի չէ եղած . շատ կարծիքներ կան . ձմեռը քիչ և ամառը յաճախ կըլլայ . ասկէ զատ՝ շատ տաքերու և չորութեան ժամանակ աւելի մահաուիթ է : Յառաջագոյն կկարծուէր թէ տարափոխիկ չէ , բայց վերջերք տարափոխիկ ըլլալը հաստատուեցաւ փորձով : Կենդանիի մը վրայ սոյն հիւանդութիւնը ցուցնող նշանները հետևեալներն են . կենդանին ուտելէ կդադարի և դուլիս վար կծուէ . ասոնք առաջին նշաններն են . քալած ժամանակը մէկէն կը կայնի և դիմաքի կկարծուի . աչքին և քթին մէջը խիստ կարմիր կըլլայ . բերնին մէջը մանաւանդ վարի պակուներն մէջի երեսը մանիշակագոյն բիծեր երեւան կեննեն . մարմնոյն տաքութիւնը կը նուազի . ասոնք ալ երկրորդ նշաններն են : Եթէ սոյն նշաններն հիւանդութիւնը դիտնալու անբաւական ըլլան , կենդանոյն գուլիսը բռնելով մէկ քանի րօպէի չափ քիթը կըսխմուի , որ նոյն ժամանակ կենդանիին արենախառն միզելը կտեսնուի . այն ատեն հիւանդութեանը փայծեղ ըլլալուն տարակոյս չմնար . եթէ կենդանին արենախառն չմիզէ՝ դիտնալու է թէ հիւանդութիւնը փայծեղ չէ . վերջերք կենդանին բոլորովին կդողայ , աչքէն արտասուք կվաղէ . քթէն , բերնէն , ականջէն , և այլ բնական ծակերէն կըսկսի արիւն վաղել . մարմնոյն զանազան տեղերը կուռին և դողդղալով կմեռնին : Սոյն նշանները օրուան տաքութեանը համեմատ մէկ երկու կամ երեք ժամ կտեսնեն : Փայծեղին ընթացքը շատ արագ է . զուարթ և բոլորովին առողջ երեցած կենդանիները ճարակած ատեններն դետինը կիյնան և մէկ քանի վայրկեան կդողդղան կամ գետինը իյնանէն վերջը ալ չեն կրնար ելնել և վերը յիշուած նշանները ցուցնելով կմեռնին :

Կենդանիի մը վրայ տեսնուած փայծեղը ընդհանրապէս անբժշկելի է , և ոչ մէկ դեղ մը օգուտ չընելուն համար : Աւելի հիւանդութեան շտարածուելուն միջոցները ձեռք կառնուին , որք են : — Պէտք չէ տաք ատեն կենդանիները փարախին մէջ ձգել , և ագարակները տանելու համար շատ ճամբայներ չըջալցընել . պէտք է չոր եղած տարիները կանուխ խուզել : Ծաղկի կամ հունտի գացած խոտեր ամենեւին տալու չէ . նաև չոր մարգագետիններու խոտեր , և կամ թէ շատ չորութեամբ և կամ թէ շատ խոնավութեամբ բուսները յետամնաց եղած խոտեր տալու չէ . տաքութեան ժամանակ լաւ կերպով աղբուած և կամ անասնոց մարմիններու մասեր պարունակող հողերու վրայ փարախ շինելու չէ . կարելի եղածին չափ մաքուր և զուտ այսինք գետի և աղբեր և այլ ջրեր տալով մնայուն ջրերէ հեռի կենալու է . հիւանդ կենդանիներէն ամենեւին արիւն առնելու չէ , գիտնալով թէ արիւն հանելը մահը կփութացնէ . բայց հօտին հիւանդ չեղող մասը բաղկացնող կենդանիներէն արիւն առնել լաւ է . հիւանդները խոզի միջոցներէն զատելու է . բայց

այս գործողութիւնը զգուշութեամբ ընել հարկ է :

Փայծեղին առաջը առնելու համար մինչև հիմա շատ միջոցներ ու դարմաններ առաջարկուած են , բայց և ո՛չ մէկին օգուտ քաղուած չէ : Մօտ ատեններս սոյն հիւանդութեան համար նոր դարման մը յայտնուած է , որուն շատ անձինք հետեւելով , առաջին անգամ կու վերուն և եղերուն՝ վերջը ոչխարաց վրայ փորձուելով կենդանեաց մեծ մասը և գրեթէ ամբողջ հօտերը սոյն հիւանդին ճիրաններէն ազատած են : Այս դարմանը պարզ և դիւրին ըլլալով՝ կհաղորդեմք մեր ազգայնոց , որ իրենք ալ ի գործ դնեն : Գարմանն այս է : Առ բուրակ և սուր հերիւն (պիւլ) , խօթէ 55 միլիմետր (1) խորութեամբ կենդանոյն ողնամէջէն 20 սանդիմետրէ (2) վար ձախ կողմի երրորդ և չորրորդ կողին (քապուրդա) մէջ տեղուր փայծեղը կպտնուի-և ձգէ հոն մէկ կամ երկու վայրկեան : Ահա այս պարզ և դիւրին միջոցաւ կենդանիները սոյն ահարկու հիւանդութեանէն կազատին : Գործողութեան ժամանակ կենդանին կարծես թէ ցաւ մը չըզգար , հերիւնը քաշել հանելէն վերջը կենդանին ճարակել կսկսի , և ոչ մէկ հիւանդութեան նշան մը չցուցնէր :

Մենք դարձեալ սոյն հիւանդութեան համար ընդհանուր կերպով կատարուելիք միջոցները բացատրել հարկ կհամարեմք :

Շատ անգամ հօտերուն ամբողջապէս կորստեան պատճառներէն մէկն ալ ախտոններուն և գոմերուն և փարախներուն անմաքրութիւնն է , որոնց մաքրութեան պէտք եղած միջոցները հետևեալներն են :

Ախտոն պատերը , մուրը , դռները և կարասիքը կուպրով (գաթրան) բռել (սըվալամագ) . և կենդանիները ախտոններուն մէջ գտնուած ատեններն նաև յաճախակի կուպր Բլաֆօ կըլուի : Փայծեղէ մեռած կենդանեաց միսը ուտելու և կաշին գործածելու չէ . և մեռնողները՝ ինչպէս որ նախորդ յօդուածով խօսեցանք , 3 կանգուն խորութեամբ թաղելու է : Վերջապէս համաճարակ հիւանդութեանց համար՝ նախորդ յօդուածոյն մէջ նշանակեալ միջոցները մի առ մի կատարել պէտք է :

Ի Լ Ա Ն ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Ասաքիբի Շահանէ գալէվրէխանէ անպարը իչիւն , տարը շուրաւտա մահֆուզ պուլունան նուսուլէսի վէճճ իլէ միւս պայեա օլունաճագ օլան եիկիրմի պին չիֆթ թուզլու գուրու Բումէլի կէօնիւնտէն մաղթու շարըզ , թարիխի գօնթրաթօտա հէման թէսլիմ օլունմագ , վէ մագպուզ սէնէտի վիրուտինտէ պէհասը սլիմ մէճիտլիյէ եիկիրմի զուրուչա , վէ մէճիտլիյէ վէրիմէզ իսէ վիտասա Ֆիյաթը իլէ պիլիտասպ Ֆէրգի իլէ պէրապէր գալիմէ օլարագ պէրվէճճը վէչին նիզամիյէ խազինէսինտէն վէրիմէք շարթը իլէ պէհէր չիֆթի ալթը զուրուչա թալիպի

(1) Կէս ցուցամտի չափ (2) Մէկ թիգի չափ

էօհտէսինտէ օլուպ, թըըըինի էվվէլը  
րուսինին երկիրմիննի փէնչչէմպիհ կիւնիւ  
գարարը գաթիսի վէրիլէճէ յինտէն՝ իթա  
իթմէյէ թալիպ օլանլէրին եէվմի մէզ  
քիւրտէ տարը շուրայի ասքէրիյէ կէլ  
մէլէրի :

19 Թըըըինի էվվէլ 1877  
Պապը սէրասքէրի

Ասաքիրի շահանէ լէվաղիմաթը իչին, միւ  
թէհաշիւայէրի թարաֆլէրինտէն գօնթ  
րաթօլէրինէ մահսուպէն էլպիսէ ան  
պարընա կէթիւրմէքտէ օլաքէլէրի հէր  
նէվի չուհա վէ սայիրէտէն էվրօքատան  
կէլէճէքլէրին կէթիւրմէտէն իխրաճընտա  
պալեալէրի աչըլմայարագ կէթիւրիւրպ  
անպարընտա անպար մէմուրը վէ մուա  
յէնէճիլէր հաղըր օլուղը հալտէ էմա  
նէթ մաղաղասընտա քիւլատ իտիլմէսի,  
վէ շայետ իչլէրինտէ աչըք պօղուգ պալ  
եա զուհուր իտէրսէ գապուլ օլուսմա  
մասը, վէ մէզքիւր էմանէթ մաղաղա  
սընտա սալիֆ էզլիքը մէմուրլէր հաղըր  
օլմատըգճա, թիւճճարտէն գաթիէն մա  
ղաղայա տուլուլ իտէմէմէսի, վէ իչպու  
չուհա վէ սայիրէ մէմուրինի միւմայիլէյ  
հիւմ մուվաճէհէսինտէ անալիզ իտիլմէ  
տիքճէ անպարը մախսուսէ վազ գըլըն  
մամասը գատիմտէն պէրու ուսուլը  
միւթթէխէզէսի իճապընտան օլմաղէ  
քէյֆիլէթ միւթէհաշիւտին մալիւմլէրի  
օլմագ իւղըն էլան վէ իչայէ օլուսմը  
աըր :

19 Թըըըինի էվվէլ 1877  
Պապը Սէրասքէրի

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
ՆԱԽՆԱԿԱՆ  
ՔՐԻՍՏՈՆ Է Ա Կ Ա Ն  
Ըստ վարդապետութեան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ  
Ի ՊԵՏՍ ՆԱԽԱԿԻՐԱԿԱՆ ԴԱՍՈՒՅ  
ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՃԱՐԱՆԱՅ  
ԿՐԹԱԿԱՆ  
ՔՐԻՍՏՈՆ Է Ա Կ Ա Ն  
Ըստ վարդապետութեան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ  
Ի ՊԵՏՍ ԶԱՐԳԱՅԵԱՂ ԴԱՍՈՒՅ  
ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՃԱՐԱՆԱՅ  
Յօրինեաց  
Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍ ՆԱՐ ՊԵՅ  
Առաջարկութեամբ եւ վաւերացմամբ  
ԱԶԳ. ԿՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅՆ  
Տղատարեալ հրամանաւ  
Տ. ՆԵՐՍԻՍԻ Ս. ՊԱՏՐԻԱՐԻԻ Կ. ՊՈԼՍՈՅ

Մեր վարժարանաց թէ՛ նախակրթա  
րանի և թէ՛ զարգացեալ դասուց աչա  
կերաք մինչեւ հիմա չունէին այնպիսի  
ֆրիստոնէական մը որ կարող ըլլար նոցա  
մտքերը գոհացուցիչ կերպիւ լուսաւորել  
կրօնի վարդապետութեամբքն՝ ու սըր  
տերնին կրթել Բարոյականի վեհ սկզբուն  
քովը :  
Այս պակասը լեցընելու համար՝ Ազ  
գային Կեդր. վարչութեան կրօն. ժողո  
վը խնդրած է Գեր. Տ. Խորէն Ս. Արքե  
պիսկոպոսէ Նար Պէյ՝ յարմարագոյն դա  
սագրքեր յօրինել, որ բոլոր գաղտնաց  
մէջ և ամէն դասատուաց ձեռքը կրօնի  
և Բարոյականի առաջնորդող գործիներ  
լինին, աշակերտաց համար ալ հրահան  
գիչ լինելու ամեն հանգամանքներն ու  
նենան :  
Կրօնական Ժողովոյն վաւերաք լիովին  
կատարեցաւ : Եւ, ինչպէս որ այս գոր

ծոց սկիզբը կը տեսնուի, Ամենապատիւ  
Սրբազան Պատրիարք Հայրն ու կրօն. ժո  
ղովոյ ֆինիչ Յանձնախումբն իրենց գո  
հունակութիւնն յայտնելով՝ կը վկայեն  
միանգամայն թէ քաջուսումն Հեղինակի  
գործերն ամենեւիմբ համաձայն են վար  
դապետութեան և աւանդից Հայաստան  
եայց Ս. Եկեղեցւո. նոյնպէս և տպա  
գրութիւն նոցա օգտակար յոյժ ի վառս  
Հայաստան Եկեղեցեաց և ուսումն յուլս  
տի մանկանց վարժարանաց Ազգիս :

Այս գովեստները բաւական երաշխա  
ւորութիւն են թէ՛ Սրբազան Հեղինակին  
իրական արժանեաց և թէ՛ սոյն Դասա  
գրոց խնամօք և ընտրելագոյն ոճով յօ  
րինուած ըլլալուն, որոյ համար՝ իբր  
տէր-հրատակիքը չ'աչխնայեցինք ոչ ծախ  
և ոչ աշխատութիւն, որպէս զի այս գըր  
քերը յարմարաւոր պատկերօք և վախ  
լուչ տպագրութեամբ ի լոյս ընծայուին :  
Քաջայայտ եմք որ այս ֆրիստոնէական  
ները Ազգին ընդունելութեանը պիտի  
արժանանան, մանաւանդ կրթիկանք, որ  
ոչ միայն Դպրոցաց՝ այլ ընդհանրու  
թեան ևս կարի օգտակար պիտի լինի,  
քանզի ընտանեկան ընտիր հրահանգներ  
կը պարունակէ. որոց միջոցաւ միայն կըր  
նամք յուսալ թէ օր մը մեր տուները  
Նախնական դպրոցաց նմանելով՝ պիտի  
կարենան զուգընթաց քայլել վարժա  
րանաց հետ և անոնց ընթացիցը նպաս  
տել ըստ կարի : Լուսաւորեալ Ազգերն  
այս միջոցով զարգացան, որ ցարգ անոր  
օգուտներն ալ կը վայելեն :

Ճ. ԱՐԱՄԵԱՆ  
Կը ծախուի դրամաճառաց խանութ  
ները  
Ի Գ. Ի Ն  
Նախնական ֆրիստոնէական 30 սանդ.  
Կրթական ֆրիստոնէական 80 »  
Կեդրոնատեղին է Փարիզու գրատունը,  
Չագմագճըլար-Յակոբեան խան թիւ 13:  
Դպրոցաց համար մեծ քանակութեամբ  
դնողներուն՝ հարկերին 10 զեղչ պիտի ըլ  
լայ :

ԱՌ ԱՐԵՔԱԿՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՊ ԳՆԱԿԱԶԳԻ  
ՔՐԻՍՏՈՆ Է Ա Կ Ա Ն  
ՎՊԱՆԱԿԻՐԱԿԱՆ ԴԱՍՈՒՅ  
Վ. Ծ Ա Ն Ն Ի  
Բերա Մեծ փողոց Աղաճամիլի բիւ 77  
Ե Ի  
Կ. Պօլիս Կամուրջի հրապարակը բիւ 1-2  
Երոպոյի առաջին գործարանաց հետ յա  
րաբերութեամբ կապուած, և իւր ղեղորհից

ընտրութեամբ և զնոց չափաւորութեամբ հըռ  
չակուած :  
Մակի մթերանոց անուանի Հ. Նէսթիլէ քի  
միագէտին շինած Յն. Լաթիլէյն, որ փոքրիկ արէ  
տղայոց, տկար կազմ ունեցող և հիւանդութե  
նէ ապաքինեցող միակ աննդարար ուտելիքէն  
համայն Եւրոպոյ մէջ ընդունուած և ամեն զըլ  
խաւսը բժշկաց հաւանութիւնն ստացած :  
Հոն կը գտնուի նաև :  
Քասմը (մատակի խմորեալ կաթ) որ մեծ  
համաւ ունի Եւրոպոյ մէջ և շատ կը փնտը  
ուի :  
Սթիլ-Կը Գէն, զուտ և մաքուր, Բէլ  
թիէ, Տիպոսը, Ժօպսթ և Էվանս Լէղէ ճար  
տար քիմիագէտներէն պատրաստուած :  
Ձկն էլ, զուտ Գրիթիանայի Բէթկէր  
Մէլլէրի գործարանէն ելած :  
Երէրէ (հինտիպա) Խահուէ, Լուսովիս  
պուրիլի Հ. Յրանք գործարանէն ելած ստամոք  
սի ուժ տուող և ախորժակ բացող որ հա  
սորակ խահուէի հետ խառնելով գինը մեծա  
պէս կիջեցնէ՝ առանց համու ու հոտը փոխելու :  
Արուստիկան սաւայց ամեն ժամու մէջ :  
Տիւթէն Զոյր, մազերու անվիրպելի ներկ :

PILULE AHOOLWLY  
ԴԵՂԱԶԱՏՔ ՀՈԼՈՒԹԻՒՆ  
Լեարդի, ստամոքսի, և աղիքներու ամեն  
տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր  
է սոյն դեղահատը, և նա ջրային տկարութեան,  
ուժաթափութեան և տկարութեան համար. կը  
ջնջէ և անհետ կընէ ամեն տեսակ անչափաւ  
րութեանց հետքերը : Սրտի և երէկամանց վրայ  
օգտակար ազդեցութիւն մ'ունի. արիւնը մաք  
րելով նոցա խանգարեալ վիճակ կը կանոնա  
ւորէ, և գրգռելով կենսական գործարանները  
կը զօրացնէ : Իւր դեղական մեծ ազդեցու  
թեամբը սրտախառնութիւն, կուծուութիւն,  
մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ  
լեցուած կազեր, դիւրեցակեր կը վանէ. մար  
սողութիւնը կը չափաւորի, և մարմինը մաք  
րուելով բոլոր այն աղտոզութիւններէ՝ որ շատ  
անդամ դանդաղան հիւանդութեանց սկզբնա  
պատճառ կըլլան, առողջ, ուժեղ, և բնական  
ղերքը կըզգենու :

ONGUENT HOLLOWAY  
ՍՊԵՂԱՆԻ ՀՈԼՈՒԹԻՒՆ  
Մորթային հիւանդութիւնք և վէրք բուժե  
լու մասին ունեցած պարսմական յատկու  
թեանցը չհաւաւարբը բնաւ ուրիշ գեղ մը. հին  
կամ նոր թունաւոր վէրքեր, ուռեցք, քաղց  
կեղ (շիբիէնչէ), սրունից և ստեանց վէրքեր  
կամ բուրսովին կանցնին և կամ կլաւանան.  
օգտակար է նաև հարբուխի, հաղի, սրտի  
բարխման, մանաւանդ օղացաւ (եէլ) ըսուած  
հիւանդութեան : Իւր կազդուրիչ և զօրաւոր  
ազդեցութեամբը խոյլ (սըրանա) հիւանդու  
թեան ապականիչ զօրութիւնը ինչ աստիճան  
օր ըլլայ կը դիմագրաւէ :  
Այս դեղերուն գործածութեան եղանակը  
նշանակուած է իւրաքանչիւր տուփի վրայ, որ  
կը գտնուի ամեն դեղավաճառներու քով, և  
մասնաւորապէս Պտհէէ-գափու թաշխանի կող  
մերը Պ. Գասապետի դեղարանը՝ Նօ. 7 կը  
ծախուի :  
Աւելի անել ուղղող կը հրաւիրուի առ հե  
ղինակն աքթոր Հոլուէ ի Լոնտոն Օքըսֆօրտ  
փողոց թիւ 553 :

ՊԱՅՄԱՆՔ ՓՈՒՆՁԻ  
1.—Փունջը ՉՈՐԵՄԱՐԹԻ և ԵԱԲԱԹ օրերը  
կը հրատարակուի :  
2.—Տարեկան բաժանորդագիրն է միայն  
չորս արծաթ մէճիկ կանխիկ վճարելի թէ՛  
մայրաքաղաքիս և իւր արուարձանաց և թէ՛  
գաւառաց համար :  
3.—Վեց և երեք ամսոց համար ալ բաժա  
նորդ կրնդունուի :  
4.—Տեղական ու գաւառական թղթատա  
րութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ :  
5.—Հատը 60 փարայ է, և կը գտնուի ա  
մեն Հայ գրավաճառաց խանութները և ձեռքէ  
ծախողներու քով :  
6.—Մանուցման տողը 3 զրուչ է մէկ ան  
դամի համար : Աւելի աժան կըլլայ աւելի ան  
գամներու համար :  
7.—Խմբագրութեան վերաբերեալ որ և է  
գիր ուղղելի առ Տնօրէն-Տէր Հ. Ս. Ալաճաճեան,  
Կ. Պօլիս Ալաճա-Համամ Խալի խան միջին  
յարկ թիւ 19 :

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ  
Հ. Ս. ԱՂԱՃԱՃԵԱՆ  
ՏՊԱԳՐ. Ս. Ղ. ՊԱՐՏԻՉՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ  
Բիգա փաշա խան բիւ 3